

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը Վեհափառ Հայրապետին ուղղյալ իր վերջին նամակում հայտնում էր, որ 1981—1982 թվականների Վիեննայի համալսարանի բյուզանդագիտական ինստիտուտի ուսումնական տարեշրջանի երկրորդ կիսամյակին ինքը հրավիրվել է մի շարք դասախոսություններ կարդալու հայ ժողովրդի պատմության մասին, սկսբից մինչև ԺԱ դարը ներառյալ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է պատմական գիտությունների դոկտոր և Մայր Աթոռի միաբան Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանին, սույն բացառիկ առիթով, և նրան բարեմաղթում հաջողություն, այն համոզումով, որ նա գիտնականի բարեխղճությամբ, ձեռնհասորեն և ըստ արժանվույն կարդարացնի սույն պատվաբեր հրավերը:

Վիեննայի համալսարանի պատմության մեջ առաջին անգամն է, որ մի հայ եկեղեցական գիտնական հրավիրվում է դասախոսելու հայ ժողովրդի պատմության մասին:

Վիեննայի համալսարանի բյուզանդագիտական ինստիտուտում նախատեսվել են հետևյալ թեմաները, որպես դասախոսության նյութեր.

1. Հայասա-Ուրարտու-Երվանդունիք և Արտաշիսյան հարստություն.
2. Մեծն Տիգրան, մինչև Արշակունիների հարստության հիմնադրությունը, Արշակունիները, մինչև Մեծն Տրդատ.
3. Հայոց դարձը քրիստոնեություն: Արշակունիք և մարզպանական շրջան.
4. Հայ-բյուզանդական, հայ-իրանական հարաբերությունները: Հայաստանը Հուստինիանոսի շրջանում.
5. Հայաստանը արաբական լծի տակ.
6. Բագրատունիների թագավորությունը.
7. Բագրատունիների շրջանում Հայաստանի ներքին և արտաքին հարաբերությունները.
8. Հայ մշակույթի ծաղկումը Բագրատունիների օրով.
9. Բագրատունիների մայրաքաղաք Անին և այնտեղ կառուցված հայկական «հազար ու մի եկեղեցիները».
10. Հայ Եկեղեցու պատմությունը սկսբից մինչև ԺԱ դար.
11. Պատմություն հայ գրականության, ընկըսբից մինչև ԺԱ դար.
12. Հայ արվեստները: